ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/13

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին Սոնա Ադամյանը, Անահիտ Աղամալյանը, Արթուր Գրիգորյանը, Արարատ Թումանյանը, Արտուշ Մաթեվոսյանը, Մարյամ Միքաելյանը, Անժելա Վանեսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը:

Նիստը արձանագրում էր Աննա Նավասարդյանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2024 թվականի սեպտեբերի 11-ի հերթական նիստի օրակարգը՝

1) Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին.
2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ագարակի բացահանքի նախագծի փոփոխություններ՝ առանց արտադրողականությունը ավելացնելու» նախագծի նախնական տարբերակի համար «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությանը նախնական համաձայնություն տալու մասին.

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 137-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի համակցված տարածական պլանավորման փատաթղթերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին .
5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ հողագրունտի հանույթ իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին.
7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին.
8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.
9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N129–Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
10)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 81-Ա/

ԼՍԵՑ - ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Սահմանել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր բնակավայրի 1 փող. 3 նրբ. շենք 5, 2 հասցեում հաշվառված Ալեն Յուրիկի Ավետիսյանին (ծնված 27.07.1981թ., անձնագիր՝ AL0449123) սեփականության իրավունքով իրեն պատկանող MERCEDES-BENZ E 280 մակնիշի (թողարկում՝ 1995թ., պետ. համարանիշ՝ 53AA033, հզորություն՝ 193 ձիաուժ) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 50 450 (հիսուն հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2024 թվականի փոխադրամիջոցի տարեկան գույքահարկի վճարումից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 82-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱԳԱՐԱԿԻ ԲԱՑԱՀԱՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ» ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԱՄԱՐ «ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Տալ նախնական համաձայնություն «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը «Ագարակի բացահանքի նախագծի փոփոխություններ՝ առանց արտադրողականությունը ավելացնելու» նախագծի նախնական տարբերակին:

2.Համայնքի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է /Որոշում N 83-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N137-Ն որոշմամբ հաստատված N1,N2,N3,N4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1,N2,N3,N4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 84-Ն/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն՝

1)քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0604-ից) 0,12695 հեկտար վարելահող հողատեսքը(հատված ԳԲ-11) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:

2) քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0604-ից) 0,12905 հեկտար վարելահող հողատեսք(հատված ԳԲ-15) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների կատարումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 85-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին» N11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 86-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը 3 (երեք) ամիս ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել «Մեղրու ՃՇՇՋ» ՍՊԸ-ին՝ հողագրունտի հանույթ իրականացնելու նպատակով՝

1) 09-051-0409-0001 կադաստրային ծածկագրով 0,73479 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ամսական 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճար

2) 09-051-0409-0001 կադաստրային ծածկագրով 0,07726 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ամսական 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վարձավճար,

3) 09-051-0409-0001 կադաստրային ծածկագրով 0,12536 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ամսական 3000 (երեք հազար) ՀՀ դրամ վարձավճար,

4) 09-005-0730-0001 կադաստրային ծածկագրով 1,12383 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ամսական 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճար:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 87-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.17421 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր»

գործառնական նշանակության (կադաստրային ծածկագրեր՝ 09-002-0063-0004-ից, 09-002-0063-0005-ից, 09-002-0063-0006-ից, 09-002-0063-0007-ից և 09-002-0063-0008-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ ավտոտեխսպասարկման կետ կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 2 265 000 (երկու միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.2083 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0734-0001-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 417 000 (չորս հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.39303 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-092-0313-0001-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 394 000 (երեք հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0047-0018-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.31428 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0537-0136-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ անասնաշենք կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 472 000 (չորս հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.41885 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «վարելահող» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-051-0423-0001) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 420 000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

7. Սույն որոշմամբ սահմանված հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) օտարման պայմանագրում ամրագրել Մեղրի համայնքի՝ նշված հողամասերի առաջնային հետգնման իրավունքը և ծրագրի իրականացման ժամկետ սահմանել 10 (տասը) տարի:

8. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 88-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 09-039-0537-0001-ից) գյուղատնտեսական նշանակության 0,36799 հա մակերեսով «արոտավայր» հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 8000 (ութ հազար) ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 89-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N129-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և մասնաճյուղերի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի

համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N139-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N129-Ա որոշմամբ հաստատված N1.2 հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 90-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 17-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 91-Ա/

Ավագանու անդամներ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը